Արձանագրություն N 3
ՄՄԾ ԳՀԽԾՁԲ-25/6 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 18 նոյեմբերի 2024թ
ժամը 10:40

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Դավիթ Մելիքյանը
անդամներ՝ Արբակ Սանամյանը, Լիանա Ասրյանը, Նվարդ Սարգսյանը,
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան
Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Հասմիկ Ղուլյանը

I. Հայտերի գնահատման մասին

(Դավիթ Մելիքյան)

1. Հրավերով սահմանված ժամկետում «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերությունը հրավերով սահմանված կարգով հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված էլեկտրոնային փոստին է ուղարկել փաստաթղթերի փաթեթ:

1.1 Գնահատող հանձնաժողովի անդամներին են փոխանցվել մասնակցի կողմից հայտի գնահատման համար ներկայացված էլեկտրոնային փոստին ուղարկված փաստաթղթերի փաթեթը:

2. «Վեբստարտ» ՍՊ ընկերությունը հրավերով սահմանված կարգով հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին չի ուղարկել հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները՝ պիտանելիության չափորոշիչի փաստաթղթերը՝ աշխատակազմի վերաբերյալ տեղեկանքը համաձայն հավելված N 1.1-ի, հրավերի 1-ին մասի 2.7 կետով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման համար որակավորումը հավաստող փաստաթղթերը՝ մասնագիտական փորձառության և աշխատանքնային ռեսուրսների գնահատման համար հրավերով սահմանված փաստաթղթերը:

3. Հանձնաժողովը ուսումնասիրեց նիստի կասեցման ժամկետի ավարտի դրությամբ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկված նամակագրության վերաբերյալ տեղեկատվությունը՝ այդ թվում «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերության կողմից գնահատման համար ներկայացված փաստաթղթերի փաթեթը և քննարկման արդյունքում որոշեց.

ա/ հայտերի գնահատման նիստը ընդհատել և հայտերով ներկայացրած փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստը շարունակել 2024թ. նոյեմբերի 21-ին ժամը 14.30-ին ք. Երևան, Նալբանդյան 13 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Դավիթ Մելիքյան

անդամներ՝ _____ Արբակ Սանամյան

_____ Լիանա Ասրյան

_____ Նվարդ Սարգսյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան

Արձանագրություն N 3.1
ՄՄԾ ԳՀԽԾՁԲ-25/6 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի (շարունակություն)

ք. Երևան

21 նոյեմբերի 2024թ
ժամը 14:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Դավիթ Մելիքյանը
անդամներ՝ Արբակ Սանամյանը, Լիանա Ասրյանը, Նվարդ Սարգսյանը,
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան
Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Հասմիկ Ղուլյանը

I. Հայտերի գնահատման արդյունքների ամփոփման մասին (շարունակություն)

(Դավիթ Մելիքյան)

1. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերության կողմից հանձնաժողովի քարտուղարի 15.11.2024թ. էլեկտրոնային փոստին ուղարկած փաստաթղթերի փաթեթը և արձանագրեց, որ «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերության «Մասնագիտական փորձառությունը», «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշների գնահատման համար ներկայացրած փաստաթղթերը ամբողջական չեն, մասնավորապես.

ա) հրավերով սահմանված «Մասնագիտական փորձառություն նախկինում կատարած աշխատանքի ծավալ» չափանիշը գնահատելու համար հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված 26.05.2022թ. «Աշխատանքների կատարման» թիվ 1/2022 պայմանագիրը ոչ լրիվ է «ամբողջական չէ»՝ մասնավորապես բացակայում է պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածը՝ գնման առարկայի տեխնիկական նկարագիրը, ինչպես նաև բացակայում է 05.09.2022թ. կնքված թիվ 1 լրացուցիչ համաձայնագիրը,

բ) «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված չէ ներգրավված մասնագետներից՝ Արման Ասատրյանի անձնագրի և որակավորումը հավաստող հրավերով սահմանված փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները,

գ) «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված 21.02.2018թ կնքված թիվ ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ-18/5 պայմանագիրը չի դիտարկվում, քանի որ «Մասնագիտական փորձառություն նախկինում կատարած աշխատանքի ծավալ» չափանիշը գնահատելու համար հիմք է ընդունվում տվյալ տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում կատարված պայմանագրերը:

Ըստ այդմ՝ «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված ոչ ամբողջական փաստաթղթերը հնարավորություն չեն տալիս գնահատել մասնակցի մասնագիտական փորձառություն և աշխատանքնային ռեսուրսներ չափանիշների համապատասխանությունը՝ հրավերով սահմանված պահանջներին:

2. «Վեբստարտ» ՍՊ ընկերությունը հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին չի ուղարկել հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները՝ պիտանելիության չափորոշիչի փաստաթղթերը՝ աշխատակազմի վերաբերյալ տեղեկանքը համաձայն հավելված N 1.1-ի, հրավերի 1-ին մասի 2.7 կետով սահմանված մասնագիտական փորձառություն և աշխատանքնային ռեսուրսներ չափանիշների գնահատման համար հրավերով սահմանված:

Ըստ այդմ՝ «Վեբստարտ» ՍՊ ընկերությունը չի ներկայացրել որակավորումը հավաստող փաստաթղթեր:

3. Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ, 42-րդ կետերի, հրավերի 1-ին մասի 2.7, 8.9 և 8.10 կետերի պահանջներով, հիմք ընդունելով այն փաստը, որ կարգի 41-րդ կետով սահմանված

պահանջի համաձայն նիստը կասեցվել է և առաջարկվել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն անհամապատասխանությունները չեն շտկվել կամ շտկվել են թերի՝ որոշեց.

ա) «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերության և «Վեբստարտ» ՍՊ ընկերության ներկայացրած հայտերը գնահատել անբավարար,

բ) մերժել «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊ ընկերության և «Վեբստարտ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած հայտերը,

գ) գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Դավիթ Մելիքյան

անդամներ՝ _____ Արբակ Սանամյան

_____ Լիանա Ասրյան

_____ Նվարդ Սարգսյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան